

Տեղեկատվություն Կորոնավիրուսի մասին

Հաջորդ շաբաթների ընթացքում մենք բոլորս պետք է նպաստենք կորոնավիրուսի տարածման կանխմանը:

1. Հետևաբար, Բրանդենբուրգ նահանգի տարածքային կառավարությունը ընդունել է հետևյալ հրամանագիրը.

- Բոլոր հաստատությունները, որոնք չեն ապահովում կենսական անհրաժեշտության ապրանքներ ու ծառայություններ, պետք է փակվեն:
- Մարմնի խնամքի ծառայությունների ոլորտի ընկերությունները (օրինակ՝ վարսահարդարման սրահներ, գեղեցկության սրահներ) պետք է փակվեն: Մնացի օբյեկտները պետք է փակվեն: Բացառություն են հանդիսանում ուտեստների առաքումը և գնումը տանը սպառման համար: Սուպերմարկետները, մթերային խանութներն ու ըմպելիքների խանութները, ինչպես նաև շաբաթական շուկաները շարունակում են գործել:

Բաց են նաև.

- Դեղատները
- Կենցաղային քիմիական նյութերի և կոսմետիկայի խանութները
- Բենզալցակայանները
- Բանկերը և խնայողական դրամարկղերը
- Փոստը
- Քիմաբքման կենտրոնները և լվացքատները
- Շինանյութերի խանութները
- Բժշկական կենտրոնները և հիվանդանոցները
- Բժշկական նյութերի խանութները
- Թերթերի և ամսագրերի կրպակները

• Արգելվում են ավելի քան երկու մարդկանցից կազմված խմբերի հանդիպումները: Բացառություն են կազմում ընտանիքի անդամները և նույն ընտանիքում ապրող մարդիկ:

• Անձանոթների միջև շփումները պետք է հասցվեն բացարձակ նվազագույնի: Հասարակական վայրերում անհրաժեշտ է պահպանել առնվազն մեկ ու կես մետր հեռավորություն անձանոթների միջև:

• Հանրային վայրեր մուտք ունենալը (օրինակ՝ ճանապարհներ, փողոցներ, հրապարակներ, երթևեկության օբյեկտներ և զբոսայգիներ) արգելվում է մինչև 2020 թվականի ապրիլի 5-ը, ժամը 24:00-ն:

• Հասարակական վայրեր կարելի է այցելել միայն հետևյալ նպատակներով.

- գնումներ և անհրաժեշտ անձնական կարիքների ապահովում
- բժշկի այց, բժշկական ընթացակարգեր
- այցեր հոգեթերապևտների կամ ֆիզիոթերապևտների, եթե շտապ անհրաժեշտ է բժշկական օգնություն

- այցեր քաղաքացիական ամուսինների, տարեցների և հիվանդ մարդկանց
- ուղեկցելաջակցության կարիք ունեցող մարդկանց և երեխաներին
- մտերիմ մարդկանց թաղման արարողության ուղեկցում
- սպորտ և վարժանքներ մաքուր օդում (ցանկալի է միայնակ, զույգով կամ կամ ձեր տան անդամների շրջապատում)
- Ոստիկանական բաժանմունքներում, դատարաններում և փաստաբանների հետ անհապաղ հանդիպումներ ունենալու դեպքում

Նույն կանոնները վերաբերվում են նաև սոցիալական ապահովության գերատեսչության դրամական միջոցների չեկերի հավաքագրմանը և դրամական նպաստներին:

2. Ինչպե՞ս է հնարավոր վարակակիր դառնալ:

Վարակը փոխանցվում է անձից այլ անձ: Դա կարող է տեղի ունենալ, օրինակ, հազալիս, այլ մարդու հետ խոսելիս, կամ ձեռքսեղմման ժամանակ:

3. Ի՞նչ կարող եմ անել վարակից և մյուսներին վարակելուց խուսափելու համար:

- Ձեռքերը պարբերաբար և մանրակրկիտ լվացեք (սա վերաբերում է նաև երեխաներին և դեռահասներին)
- Հազալիս և փռշտոցի ժամանակ փակեք բերանը թաշկինակով կամ արմունկով (սա վերաբերում է նաև երեխաներին և դեռահասներին)
- Մի դիպչեք ձեր դեմքին
- Մանրակրկիտ մաքրեք ձեր սենյակը և բնակարանը
- Մի օգտագործեք ընդհանուր պարագաներ և սպասք
- Նվազագույնի հասցրեք անձնական շփումները: Մա վերաբերում է ինչպես հանրային, այնպես էլ անձնական տարածքներում շփմանը:
- Նվազագույնի հասցրեք ֆիզիկական շփումը (խուսափեք ձեռքսեղմումից, այտին համբուրվելուց և գրկախառնություններից առաջիկա շաբաթների ընթացքում):
- Գնումներ կատարելիս և հասարակական տրանսպորտից օգտվելիս պահպանեք առնվազն մեկուկես (1,5) մետր հեռավորություն այլ մարդկանցից:

4. Ինչպե՞ս իմանալ՝ արդյո՞ք վարակակիր եք:

Կորոնավիրուսով վարակված լինելը դրսևորվում է հազի, հոսող քթի, կոկորդի ցավերի և բարձր ջերմության միջոցով: Մա շատ նման է գրիպի: Որոշ մարդիկ նաև ունենում են լուծ: Որոշ հիվանդների դեպքում հիվանդությունը ավելի ծանր է դրսևորվում, քան մյուսների դեպքում. նրանք շնչառության դժվարություններ և թոքաբորբ են ունենում: Եթե վարակակիր եք, ապա հիվանդության առաջին նշանները կարող են ի հայտ գալ մինչև 14 օր հետո:

5. Ի՞նչ պետք է անեմ, եթե հիվանդության նշաններ ունեմ:

Խնդրում ենք, մի գնացեք բժշկի: Նախ կապվեք ձեր տարածքային պատասխանատու մարմիններին կամ սոցիալական և միգրացիոն ծառայությունների աշխատակիցների հետ:

Նրանք այնուհետև կկապվեն համապատասխան մարմինների հետ: Եթե դուք խոսում եք գերմաներեն, զանգահարեք.

- ձեր ընտանեկան/անձնական բժիշկին
- կամ զանգահարեք 116-117 հեռախոսահամարով (բժշկական ծառայության թեժ գծի հեռախոսահամար)

6. Ինչու՞ չպետք է լքեմ իմ սենյակը / իմ բնակության վայրը / իմ բնակարանը:

Եթե դուք վարակված եք կամ կասկածում եք, որ վարակված եք, ապա պետք է հետևեք կարանտինին և մեկուսացված լինեք: Քանի դեռ վարակիչ եք, ձեզ համար կիրառվում են հատուկ կանոններ՝ այլ մարդկանց պաշտպանելու համար: Որոշ ժամանակ ձեզ չի թույլատրվում լքել մեկուսացման վայրը՝ առանց ձեր տարածքային կառավարման ղեկավարի թույլտվության: Ձեզ կտրամադրվի այն ամենը, ինչ ձեզ հարկավոր է ձեր սենյակում: